

## ԽԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՅԱՎԵԱՆ

## VIII.

Այժմ անցնում ենք Արովեանի «ՎԵՐՔ Հայաստանիի» քննութեան ժամանակ ամենակարեսը մի կէտի լուսաբանութեանը—ինչ պատճառով և ինչպէս էր վերաբերում հայ գիւղացին փողային տնտեսութեանն ու վաճառականութեանը։

Խնդիրը ընդհանրացնենք և հարց տանք. ինչից է կախուած դասակարգերի փոխադարձ վերաբերմունքը։

Ի՞նչն է պատճառը, որ պատմութեան մէջ հանդիպում ենք մի շրջանի, երբ ազնուական ու կալուածատէր դասակարգը պատկառանը է ազդում միւս դասակարգերի վերայ, և սակայն յանկարծ մի քանի ժամանակից յետոյ «ազնուական», «արիստոկրատ», «պամեշիկ» բառերը դառնում են նախատական մակդիրներ։

Ինչու հին հռովմայեցին անարգանքով է վերաբերում mercator-ներին (վաճառական), ոռւս կալուածատէրը վիրաւորական է համարում բուռչ կոչումը ու բարձրից է նայում արշանուկ-ին, բայց նրանց հոգեկից ու հարիւրաւոր տարիների ազնուական ծագումն ունեցող պահնցն ու կանցլերը ամօթ չեն համարում իրենց կողքին նստած տեսնել բորսայի ճարպոտ ու հաստափոր ներկայացուցչին։

Ի՞նչն է պատճառը, որ մի ժամանակ այնքան ստորարարած էր համարում «վշտացեալ գեղջուկը», իսկ այժմ գիւղացու փառարանութեանն է նուիրում վիպասանը իւր գրիչը, բանաստեղծը՝ քնարը և հոետորը՝ իւր լեզուն։

Ինչու էր երբեմն, ե՞ր մարդիկ պարծանք էին համարում «երբորդ դասակարգին» պատկանելը, իսկ ներկայումս «բուրժուատ» կոչումը լսելիս ուսչում են միլիոնաւոր մարդկանց ճակատի երակները, պէծին են տալիս աշքերը, փրփրում արիւնը երակներում և սեղմուում բռունցքը զայրոյթից և ատելութիւնից։

Գտել է արդեօք ժամանակակից սօցիոլոգիան այս զարմանալի երևոյթների համար մի բացատրութիւն:

Այս, և ահա դրանց բանալին: «Իւրաքանչիւր հասարակական դասակարգ նշանակութիւն է ձեռք բերում իւր ոյժի համեմատ» \*): «Իսկ ինչն է կազմում հասարակական տարրերի ոյժը: Ոյժի միջոցները կարող են տարբեր լինել նայած ժամանակին ու հանգամանքներին. ոյժի էութիւնը միշտ միևնույն է: Հասարակական տարրի ոյժը գտնուում է մարդկային կարիքներին բաւարարութիւն տալու միջոցների ազատ տիրապետութեան մէջ: Մարդկային կարիքներին բաւարարութիւն տալու միջոցների տիրապետութեան չափերից է կախուած ոյժի մեծութիւնը» \*\*):

Որքան դասակարգը հզօր է տնտեսապէս (օր. կալուածատէրը, գիւղացին, վաճառականը) կամ՝ տնտեսութեան մէջ կատարած դերսկ (օր. բանուօրը), այնքան աւելի արհամարհաբար է նայում միւս դասակարգերի վերայ, և այնքան վերջինների ներկայացուցիչները ճգնում են մտնել այդ հզօր դասակարգի մէջ: Իսկ երբ թուլանում է զօրեղ դասակարգը, նրա անդամները փոխում են իրենց վերաբերմունքը դէպի միւս դասակարգերը և իրենց հերթին աշխատում են դասալիք լինել սեփական դասակարգից: Ուրեմն է դասակարգի հզօրութեան իւրաքանչիւր աստիճանին անհրաժեշտօրէն համապատասխանում է որոշ վերաբերմունք դէպի հասարակական տարրերը, այնպէս որ նրա ոյժի մեծութիւնից կարելի է եղրակացնել նրա վերաբերմունքը դէպի ինքը և միւս դասակարգերը, և ընդհակառակը, նրա վերաբերմունքից կարելի է հետևեցնել, թէ նա ինչ հզօրութեան տէր է: Սոցիոլոգիական այս օրէնքի ճիշտ ըմբռնումը շատ բան հասկանալի է կացուցանում պատմութեան, ներքին քաղաքականութեան և դրականութեան մէջ:

\*) Людвигъ Гумилевицъ. «Основы социологии» пер. подъ ред. В. Гессена, СПБ, 1899, кн. 236.

\*\*) Կոյնը, եր. 204.

Այժմ արդէն ժամանակ է հարցնելու. ինչպիսի վերաբերմունք կարող էր ցոյց տալ փողային տնտեսութեանն ու վաճառականութեանը հայ գիւղացին այն ժամանակ, երբ այդ տնտեսութիւնը թոյլ էր զարգացած, իսկ առևտրական դասակարգը գեռ շատ փոքր զօրութիւն ունէր. այն հայ գիւղացին, որի տնտեսութիւնը իրեն լիովին բաւարարութիւն էր տալիս, այսինքն այնքան տնտեսապէս անելանելի կացութեան մէջ չէր դրուած, որ այդ տնտեսութիւնից դուրս որոնումների ետեից ընկնէր.

Ետ հասկանալի է: Փակ տնտեսութեան շրջանի հայ գիւղացին կարող էր միմիայն բացասաբար վերաբերուել փողային տնտեսութեանն ու վաճառական դասակարգին:

«Փողի բարաքեաթին էլ նալաթ, իրա կտրողին էլ էսօր ջէրդ լցնես, էգուց պէտք է մատդ լպստես. Ոչ գիւղուը քունդ ա տանում, ոչ ցերեկը զարարդ։ Փորացաւ ընկածի պէս մարդ չի իմանում, թէ թիքէն որ կողմովն ա գնում։ Փողը որ կայ, ձեռի կեխտ. էսօր կայ, էգուց Աստուծով միմիթարիս Մեռնիս, պէտք է շներոց, գէլերոց ըլի։ Թէկուզ փողի համե առած, թէկուզ իր միսը կերած. հէսաբը մէկ ա . . . ջէ, չէ, փողի սիքնն ճանաչողը ոչ հոգի ունի, ոչ հաւատ։ Փող—հող մին աւ ջարգար Պ. որ շատ փող ունի, հէնց էն ա, ինձանից մէկ թիվ բարցրացել ա ու լաւ ապրում։ Նրա քոռ աչքը գիտենայ։ Ետ ֆիքր անելուցը երեսի կաշին գնացել, չոփ ա դառել, քամակն էկել, փորին դէմ առել, ատամները ցիցցից մնացել, աչքերը կուլ գնացել, մէկ որ վչես հազար տեղ գունդ ու կծիկ կըլի. մէկ որ քթին հուպ տաս, հոգին էն սհամթը կտայ . . . թահ. մարդ իրան հոգին պէտք է ծախի, որ փողին թամահ անի<sup>8)</sup>։

Թէկ վաճառականութիւնը թոյլ է զարգացած և ընական տնտեսութիւնն էլ իւր բոլոր ոյժը գեռ պահպանում է, բայց արդէն զգացուում է առևտրականի ու երկրագործի շահելի հակադրութիւնը.—առևտրականը աշխատում է թանգ ծախել իսկ գիւղացին՝ էժան գնել։

\*.) «Վէրը Հայաստանի», եր. 56—58.

«Ճո՞թ առնելիս հօ շատն ուզում ա, մէկ երկու շահե  
փող ենք դատել, էն էլ նո խլի» \*),

Փողային տնտեսութիւնը առելի է գիւղացու համար  
նաև նրանով, որ քաղաքում ստեղծւում է իրերի այն-  
պիսի դրութիւն, երբ այլ ես հնարաւոր չէ գիւղի լիու-  
թիւնն ու առատաձեռնութիւնը:

«Յաղաք որ մտնում եմ հէնց իմանաս, թէ աշխարքը  
սով ա ընկել. էլ ոչ խէր կայ, ոչ բարաքեաթ: Հացն ու  
ջուրն էլ, որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ում  
դուռը գնաս, ում ձեռդ դէմ անես: Բաղի վախտ էլ  
տեսել եմ, որ դուքաններումը կիտուկ կիտուկ մանեթնե-  
րը, ոսկին ածած՝ ամեն փող համարելիս էնպէս զիտես,  
թէ փողատիրոնց հոգին հետն ա դուռ գալիս, էնպէս են  
որթսրթում իրանց խաղինի վերայ: Հէնց իմանաս, թէ  
առաջներիցը թե կառնի, կթռչի Մէկ ձեռդ դէմ արա, շան  
որդի ըլիմ, ոչ մէկ բուռը հողի արժանանամ, թէ սուտ  
ըլիմ ասում, Աստուած, Երկինք, գետինք, ծնլ, ցամաք,  
—մէկ ծեղ էլ չեն տալ, որ աշքդ կոխես: Հաղար տարի  
էլ, որ աղիզ սիրելու դռանն էլ շինքդ ծոես, կանգնիս, սովու-  
մեռնիս, հազար տարի ահօթի փորով զկոտաս, մէկն էլ ա  
քեզ տուն չի կանչիլ, մէկ սառը ջուր խմացնիլ \*\*):

Չնայած երկրագործական կեանքի բոլոր ջատագո-  
վումներին, գիւղացին արգէն զգում է, որ իր կտմքից  
անկախ մի վատ, չար բան է կատարւում, որ երանելի-  
նին ժամանակը անցել է. թուռում է, թէ, որ նրա խօսքերի  
մէջ ապագայի վերաբերմամբ յուետեսութեան նշոյներ  
կան:

«Եյ գիտի ժամանակ հա, ով էր տեսել կամ լսել  
աւալի սփթա էսպէս բաներ, գառն ու գէլն ի միասին  
արածում էին, հմիկ կովը վեր են քաշում, որ տեսնեն,  
թէ եարար ֆորթ կայ թէ չէ: Սատկած ձիու նախի են

\* ) Վէրը Հայաստ, եր. 58.

\*\*) Նոյնը, եր. 57—58.

ման գալիս. Ել ում ասես դարդդ։ Հերը որդին չի ճանաշում, որդին՝ հօրը, ախպէրն՝ ախպորը. լաւ ա, որ քարը քարի վրայ կանդնած մնում ա...»\*)

Այդ նշան է, որ արդէն սկսում է իւր յաղթական ընթացքը առևտրականը։ Այդ «երրորդ գասակարգն» է, որ իւր ապրանքով ու փողով քայբայելով ու խորտակելով հին նահապետական շէնքի հիմքերը՝ նոր կուլտուրայի սկիզբն է դնում։

## IX.

Քիչ առաջ տեսանք, որ գիւղացիութիւնն ու հոգեուրականութիւնը հանդէս էին գալիս, իբրև վաճառող ու գնող, հակադիր շահերով։

Իսկ ի՞նչ տնտեսական յարաբերութիւն կարող է լինել գիւղացիութեան ու հոգեորականութեան միջև։

Այն ժամանակ, երբ հոգեորականութիւնը աղնուականութեան պէս տէր էր ընդարձակ կալուածների, որոնց ում ընակւում էին գիւղացնները, հոգեորականութեան ու գիւղացիութեան յարաբերութիւնը կալուածատիրոջ ու հողը մշակող աշխատաւորի յարաբերութիւն էր, որի ժամանակ նրանք հակադիր շահեր ունեին, ինչպէս հասարակ աղնուականն ու գիւղացին։ Այն ժամանակ հոգեոր դասը այնպէս շէր ծանրացած գիւղացիութեան մէջըին։

Իսկ յետոյ, երբ հոգեորականութիւնը համարեա բոլորովին զրկուեց իւր հողային սեփականութիւնից և իւր ապրելու միջոցները իբրև եկեղեցական տուրքեր ձեռք էր բերում լոկ իւր կոչման շնորհիւ, — գիւղացիութիւնն էր գլխաւոր գասակարգը, որ պէտք է ապրելու միջոցներ մատակարարէր նրան, իրերի այսպիսի դրութիւնը անշուշտ աւելի դգալի պիտի լինէր գիւղացու համար, սրանից պիտի առաջանար լարուած վերաբերմունք գէպի եկեղեցական դասը, որը առանց ֆիզիքական աշխատանք գործադրելու օգտում էր նրա աշխատանքի արդիւնքներից։

\*) «Վ. էրբ Հայաստանի», եր. 58.

«Ինչ կուզէ ասեն, — դիտում է Աղասին կարգաւորների մասին, — ես իմ կոպիտ գլխովը էնպէս եմ կարծում, նհախ տեղը՝ դատած մալլ ուտելլ ու դաշտակ քնիլլ հարամ ա։ Մարդ պէտք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի»։ \*)

«Բանը էն չի, որ մարդ ծերը տալիս գնայ ժամը, մէկ երկու ծունը դնի, գուս գայ, մի քիչ գրին մտիկ անի, արջտոտայ, քունը տանի, կակող բարձի վրայ, զոյթուքի եօրդան գօշակում երկար ձգուի, ուտի, խմի, քէփ անի, փորն ու գլուխը հաստացնի ու գայ մեր ջանին ընկնի, թէ ինչ որ դատէլ էք, էն էլ մեզ տուէք, որ տանենք, լաւ ուտենք, լաւ հագնենք, լաւ մաշենք, ձեզ համար ազօթք անենք։ Ախպէր, բարա, ջանըմ, գեօզըմ, ազօթք ունիս, քեզ համար պահի, քեզ հմար արաւ ի՞նչ ես տուել, որ մեզանից չես կարում ետ առնի։ . . . Քեահլան ձիու վրայ իրանք են նստում, խաս ու զումաշ իրանց հագին ա, զարլու փլաւ ու հազար տեսակ անոշ կերակրներ, խմիչք իրանք գործ ածում, բանըդ կուշտն (մօտը) ընկած վախտը ուղում են գլուխդ վէր ըերեն։ Տօ հէնց փող պէտք է տամ, որ հոգիս գրախտ գնայն։ \*\*)

Մեծ գժկոհութիւն է արտայայտուում նաև գիւղական քահանայի մասին խօսելիս։

«Ամէնը հօ ամէնը, իլահիմ մեր տէր Մարկոսը, որ առաւօտից մինչ բիգուն փիլոնն ուսին քցած, փոխանը վեր քաշելով, հողաթափը ծփծփացնելով կամ քօշերը քստքստացնելով, քուցին քուցին անելով, մէկ դագանակ ձեռին, լոնդի (երկար) տէրողորմէն շխշկացնելով, քուշէքը շափելով, մէկ մեռել կամ կնունք, շիլափլաւ կամ մատաղ պատահելիս մէկ էլ էն ես տեսնում, որ հազարով, փոշտալով, ոտին գլխին անելով, գոները ջարդելով, կոտրատելով, ափալ թափալ ներս ընկաւ, հոգէառ հրեշտակի պէս էկաւ, թունդրի զբաղը կտրեց, իրան իրան նստեց,

\*) «Վէրը Հայաստանի», եր. 26.

\*\*) Նոյնը, եր. 40—41.

արագ մազա ուղեց, ու հէնց իմանաս, մեռելի կէս հոգին ինքն ա ուզում հանիւ Դեռ պատանը չկարած, չուացրած, շուտով թաղումելէքն ու կողոպուտն ա ուզում... Մէկ հացկերոյթ ըլլելիս ոռուփրի դլխին ինքն ա նստում, հինգ մարդի զգար հաց ուտում, տիի հոտն առնելիս փորը դըլուբլաց ընկնում: Տօ, քո տունը չքանդուի, քո տունը, հօ սոված չմեռար, այ խանի խարար, ի՞նչ էլաւ քեզմարդի փորը հօ դժոխք չի, որ իրան ուտիւ: Ար ու ձոր տէրտէրի փոր, ի՞նչ զորդ են առել է՞ւ: \*)

Սակայն չպէտք է կարծել, թէ գիւղացիութեան վերաբերմունքը կարող է սրանից շատ հեռու գնալ: Նրա բողոքը չէ ուղղուած այն գաղափարների դէմ, որոնց կրողն է հանդիսանում հոգեորականութիւնը: Ոչ, Այս կողմից գիւղացին հանդէս է գալիս չափազանց յետադէմ, նոյն իսկ ճգնապաշտ հայեացքներով:

Աւեանու ճգնաւորներն են լաւ կարգաւոր, ի՞նչ խօսք ունիմ, բաժակի, մսի համ չեն տեսնում, հագածները բուրդ առ շալ չոր գետնի վերայ են քնում, երեսներիցը լիս ա վէր թափում, տաս, էլի կօրհնեն, չտաս, էլի կօրհնեն, Մօտը մտած ժամանակը Աստուծոյ բան են խօսում, կնկայ երես տեսնելիս հօ՝ երկու վերստ ճամփայ են փախչում:\*\*) )

Գիւղացու՝ դէպի հոգեորականութիւնն ունեցած վերաբերմունքի բոլոր կողմերն սպառած չենք լինիլ, եթէ չաւելացնենք, թէ ի՞նչ կուլտուրական պահանջն ունի նա եկեղեցական գասից: Նրա պահանջն է — լինել ուսուցիչ և առաջնորդ երկրային կեանքում, որի փոխարէն գիւղացին պատրաստ է ամեն ինչ վճարել:

«Երէխէքս չոբան դառած ման են գալիս, նրանց դառած չեն քաշում, որ մէկ այբբեն էլա, մէկ ճղի-բղի սովորացնեն, հէնց իրանց ֆիբրն են քաշում: Էդպէս հօ չի ըլլիլ»:\*\*\*)

\*) «Վէրը Հայաստանի», եր. 25.

\*\*) Նոյնը, եր. 40.

\*\*\*) Նոյնը, եր. 25.

«Որդի, էրէխայ իշխ պէս մենձանում են, նրանց հոգով  
շեն քաշում, վարժատուն շեն բաց անում, շեն կարդաց-  
նում, հէնց ուզում են, թէ մեր դատածը խլեն»: \*)

«Տօ փող էլ ուզես, կտամ, չունենամ—գլուխս կծա-  
խեմ, քեզ կպահեմ, թաք ըլի՛ էնպէս բան տսես, որ  
խելքումս մտնի. իմ հաւարին հասնիս, էն ժամանակը  
հոգիս ուզես, քեզ թասիր չեմ անիլ, չեմ»: \*\*)

«Թող ինձ կարդացնեն, որդուս ուսումն տան, մեզ  
ճամփայ շհանց տան, ճամփից, հաւատից շհանեն, սատանի  
փայ ըլիմ, մէկ բռու հողի, մէկ գաղ կտաւի, ժամ, պա-  
աւարտգի հասրաթ, թէ աչքս ուզեն, շհանեմ, իրանց տամ,  
որդիս ուզեն, չմորթեմ, մատաղ անեմ»: \*\*\*)

(շարունակելի)

Թ. Աւդալբէզեան



## ԿԱՆՑԻ ԻՄԱՅԱՅԱՆ ՈՒԹԻՒՆԸ

### II. Քննական ներածութիւն

#### 1. Ռացիօնալիզմի և էմպիրիզմի բննադատութիւնը.

Էմպիրիզմի և ռացիօնալիզմի ուրեմն և ընդհանրապէս  
նախ-կանտեան փիլիսոփայութեան այս տրագիկ վախճանը  
մի րոպէ այն տպաւորութիւնը թողեց, որ փիլիսոփայու-  
թիւնն առհասարակ իւր գործը վերջացրել է, որ նա այժմ  
սոսկ պատմական նշանակութիւն ունի. ուստի այսուհետեւ  
մարդկային միտքը իւր հարցասիրութեան համար պիտի  
ապաստանի առանձին մասնագիտութիւններին և ոչ թէ  
այդպիսի մեծ և խաբուսիկ ցնորդի, որի անունն է փիլի-  
սոփայութիւն. բաւական է թողնել, որ փիլիսոփայութիւնը

\*) «Վերը Հայաստանի», եր., 4 ։

\*\*) Նոյնը, եր. 25.

\*\*\*) Նոյնը, եր. 42.